Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԺԻՐԱՅՐ ՀՈՎՆԱՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

(18 օգոստոսի 2007 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել սգակիր Հովնանյան ընտանիքին Ժիրայր Հովնանյանի մահվան կապակցությամբ, ուր ասվում է. *«Ցավով տեղեկացանք մեր ժողովրդի և Եկեղեցու արժանավոր զավակ Ժիրայր Հովնանյանի մահվան մասին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում հոգելույս հանգուցյալի ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին, ընկերներին ու մերձավորներին:*

Անձնապես ճանաչել ենք հոգելույս Ժիրայր Հովնանյանին և քաջատեղյակ ենք ազգային կյանքից ներս նրա նախանձախնդիր գործունեությանը: Իր կյանքի ողջ ընթացքին նա սիրով ծառայեց հավատավոր մեր ժողովրդին, գնահատելի ավանդ բերեց Սփյուռքում հայորդյաց հոգևոր և ազգային կյանքի պայծառությանը, Հայրենի մեր Երկրի զորացմանն ու հայրենաբնակ մեր ժողովրդի առջև ծառացած դժվարությունների հաղթահարմանը: Հոգելույս հանգուցյալը բարի հիշատակ է թողնում մեր ժողովրդի հոգում՝ ի Տեր ննջելով արժանավոր գործերի վաստակով:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Բարին Աստված Իր առատ ողորմությամբ գթա հավատավոր Իր ծառային՝ նորոգ հանգուցյալ Ժիրայր Հովնանյանին, և խաղաղության մեջ ընդունի նրա լույս հոգին՝ արժանացնելով երանական հանգստյան: Թող Երկնավոր Տերը Սուրբ Հոգու շնորհով սփոփանք ու մխիթարություն պարգևի Հովնանյան ընտանիքի սգակիր անդամներին, բոլոր հարազատներին ու բարեկամներին»: